



ՇԱՀԱԳՐԳԻՌՆԵՐԴՐՈՂՆԵՐԻՆ ՀԱՍՏԱՆԵԼԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

DOCUMENT, AVAILABLE TO THE INTERESTED INVESTORS

Առաջարկի նպատակը

Համաձայն բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենքի՝ Բանկն իրավունք ունի վճարել շահութաբաժիններ իր գուտ շահույթից (կուտակված շահույթից): 30.11.2016թ դրությամբ Բանկի կուտակված շահույթը, ըստ ՀՀՄՍ, կազմում է 7,224,556,000 ՀՀ դրամ, որը չի ներառում 2016թ-ի տարեկան արդյունքները:

Հաշվի առնելով Բանկի կայուն ֆինանսական վիճակը, զարգացման հեռանկարներն ու արդյունավետության մակարդակը, Յունիբանկ ԲԲԸ Խորհուրդը 09.12.2016թ. որոշում է կայացրել Յունիբանկ ԲԲԸ սովորական անվանական բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերին, որոնք 28.11.2016թ. դրությամբ ընդգրկված են Բանկի բաժնետերերի ռեեստրում, վճարել **01.01.2016-30.09.2016թթ.** ժամանակահատվածի համար միջանկյալ եռամսյակային շահութաբաժիններ Բանկի կուտակված շահույթից՝ սովորական անվանական բաժնետոմսերի տեսքով:

Սովորական անվանական բաժնետոմսերի տեսքով շահութաբաժինների վճարումը համարժեք է 1 բաժնետոմսի դիմաց 0.0966596 բաժնետոմս հաշվարկին (օրինակ՝ 1.000.040 ՀՀ դրամի բաժնետոմսերի դեպքում շահութաբաժինների վճարումը համարժեք կլինի 4348 հատ բաժնետոմսի դիմաց 420 բաժնետոմս հաշվարկին):

Սովորական անվանական բաժնետոմսերի տեսքով շահութաբաժինների հաշվարկը կատարվում է ստորակետից հետո երկու նիշի ճշտությամբ, որի դեպքում միավորի ամբողջ թիվը չի փոխվում, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 0-ից 4-ի, և փոխվում է՝ մեծանալով մեկ միավորով, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 5-ից 9-ի:

18.01.2017թ-ին կգումարվի Բանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով՝ հեռակա քվեարկության կարգով՝ կանոնադրության փոփոխությունը հաստատելու նպատակով: Բաժնետոմսի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է Բանկի կանոնադրական կապիտալի փոփոխությունն արտացոլող կանոնադրությունը (տր խմբագրությամբ կանոնադրությունը) ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցելուց հետո:

Ներդրողները կարող են սույն փաստաթուղթը ստանալ նաև Բանկի և նրա մասնաճյուղերի գործունեության վայրերից (Գլխ. գրասենյակ - ՀՀ, ք. Երևան, Կենտրոն համայնք, Չարենցի փողոց, 12 շենք, թիվ 53, թիվ 1-5) կամ Բանկի ինտերնետային կայքից՝ www.unibank.am:

Բաժնետոմսերի տեսակը և դասը

Առաջարկվող բաժնետոմսերը ոչ փաստաթղթային սովորական բաժնետոմսեր են:

Բաժնետոմսերի անվանական արժեքը և քանակը

Որպես շահութաբաժին վճարվող սովորական անվանական բաժնետոմսերի քանակը կազմում է 13,962,749 հատ (տասներեք միլիոն ինը հարյուր վաթսուներկու հազար յոթ հարյուր քառասունինը) հատ: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ: Շահութաբաժինների վճարման համար բաժնետոմսերի շուկայական արժեքը խորհրդի որոշմամբ սահմանվել է 230 (երկու հարյուր երեսուն) ՀՀ դրամ:

Առաջարկի պայմանները

Թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմում է **1,396,274,900** (մեկ միլիարդ երեք հարյուր ինսուսուվեց միլիոն երկու հարյուր յոթանասուներորս հազար ինը հարյուր) ՀՀ դրամի չափով՝ հաշվարկված թողարկվող (առաջարկվող) բաժնետոմսերի անվանական արժեքով կամ **3,211,432,270** ՀՀ դրամ (երեք միլիարդ երկու հարյուր տասնմեկ միլիոն չորս հարյուր երեսուներկու հազար երկու հարյուր յոթանասուն) հաշվարկված շուկայական գնով:

Առաջարկվող բաժնետոմսերի մասով հայցվելու է առևտրի թույլտվություն թողարկման որոշմանը հաջորդող հինգ աշխատանքային օրերի ընթացքում: Առևտրի թույլտվության հայցը կարող է նաև չբավարարվել:

Offering Purpose

According to IFRS standards, the accumulated profit of the bank as of 30 November 2016, not including the annual results of 2016, equals to AMD 7, 224,556,000. According to the Law on Open Joint Stock companies Bank has the right to pay dividends from the net (accumulated) profit.

Taking into account the stable financial situation, prospects of development and the level of efficiency of the Bank, Unibank's Board made a decision on December 9, 2016 to pay interim dividends for the period 01.01.2016-30.09.2016 to the shareholders of the Bank, who were included in the Register of the Bank's shareholders as of 28.11.2016. The dividends were paid from the accumulated profit of the Bank in the form of ordinary registered shares, with the calculation of 0.0966596 additional share against purchased 1 (For example, for the package of 1,000,040 AMD dividend payments equal to 420 additional shares against purchased 4348 shares.

The dividend calculation, envisaged for the payment of non-documentary common shares, is realized by the method of rounding to the nearest two numbers, when the value of the whole digit does not change if the digit on the right hand side of the requested rounding digit is between 0-4, and it increases by one if the digit on the right hand side of the requested rounding digit is between 5-9.

On 18.01.17 an Extraordinary General Meeting of shareholders will be called via absent voting for the Charter approval. A buyer is recognized as the owner of securities upon registration at the CBA of the amendment introduced to the Charter (new edition of the Charter).

Investors may obtain the given document at the head office of the Bank (located at 12 Charents St., #53, 1-5, Yerevan, Kentron Administrative District, RA), at its other branches or from the Bank's web site at www.unibank.am.

Type and class of the shares

Non-documentary common shares

Nominal value and number of shares

Total volume of non-documentary common shares, to be paid as dividends, equals to 13,962,749 (thirteen million nine hundred sixty-two thousand seven hundred forty-nine) shares. The nominal value of one share is AMD 100(one hundred). The Board of the Bank defines market value per common registered share of AMD 230.

Offering conditions

The nominal value of the shares equaled to **AMD 1,396,274,900** (one billion three hundred ninety-six million two hundred seventy-four thousand nine hundred), with a market value of **AMD 3,211,432,270** (three billion two hundred eleven million four hundred thirty-two thousand two hundred seventy).

For the offered shares an admission to trading will be applied within five working days after Board's decision on the issue of shares, an application for admission to trading may be also rejected.

The share register of the Bank's shares will be maintained by Central Depository of

Ինչպես նախկինում տեղաբաշխված, այնպես էլ առաջարկվող բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումը իրականացվելու է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետև՝ ՀԿԴ) կողմից (ՀՀ, 0010, Երևան, Միեր Մկրտչյանի 5բ):

Բանկը դիմելու է «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ բաժնետոմսերի ցուցակման համար: Բաժնետոմսերի ցուցակման դիմումը կարող է «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի կողմից չբավարարվել: «Յունիբանկ» ԲԲԸ-ի սովորական անվանական բաժնետոմսերը ցուցակված են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա»-ի Առաջնային ցուցակում (A): Բաժնետոմսերի ցուցակման և առևտրի թույլտվություն ստանալուց հետո Բանկի բաժնետոմսերը կարող են գնվել և վաճառվել «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի համապատասխան հարթակում: Բաժնետոմսերի ցուցակման և առևտրի թույլտվություն ստանալուց հետո Բանկի բաժնետոմսերը չեն կարող գնվել և վաճառվել կարգավորվող շուկայից դուրս, բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված բացառությունների՝ հետևյալ դեպքերի համար.

- մասնավոր գործարքների համար, այն է՝ այնպիսի գործարքների, որոնց կողմերը նախապես հայտնի են, ընդ որում՝ ՀՀ ԿԲ խորհրդի 27 նոյեմբեր 2012 թ.-ի թիվ 331- Ն որոշման համաձայն՝ մասնավոր գործարքներ են համարվում՝
- ✓ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից կնքվող գործարքները,
- ✓ Թողարկողի կողմից իր թողարկված արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման գործարքները,
- ✓ Արժեթղթերը հանձնելու առաջարկի շրջանակներում բաժնային արժեթղթերով կատարվող գործարքները:
- բաժնետոմսերի տեղաբաշխման շրջանակներում տեղաբաշխողների կողմից իրականացվող գործարքների համար.
- շուկայում առևտրին թույլատրված բաժնետոմսերի այլ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության և վաճառելու դեպքերի համար:

Շուկա ստեղծող

Բանկն արդեն ունի շուկա ստեղծողի ծառայությունների մատուցման պայմանագիր «Արմենբրոկ» ԲԲԸ-ի հետ, և գործող պայմանագրի դրույթները տարածվելու են նաև բաժնետոմսերի նոր թողարկման համար (հասցե՝ ՀՀ, Երևան 0018, Տիգրան Մեծի 32/1):

**Բաժնետոմսերից բխող իրավունքների նկարագրությունը
Շահութաբաժնի ստացման իրավունք**

Յուրաքանչյուր բաժնետոմս իր սեփականատիրոջը իրավունք է տալիս ստանալ շահութաբաժին՝ իրեն պատկանող բաժնետոմսերի քանակին համամասնորեն: Ինչպես նախկինում տեղաբաշխված, այնպես էլ տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարման հարցերի կանոնակարգումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ և Բանկի «Շահութաբաժինների վճարման» կարգով:

Բանկն իրավունք ունի որոշում ընդունելու (հայտարարելու) իր բաժնետերերին եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով և կանոնադրությամբ: Սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժինը վճարվում է ՀՀ դրամով, իսկ կանոնադրությամբ նախատեսված դեպքերում նաև այլ գույքով, այդ թվում՝ Բանկի բաժնետոմսերով: Բանկի բաժնետերերին շահութաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե լրիվ չի վճարվել Բանկի հայտարարված կանոնադրական հիմնադրամը, ինչպես նաև եթե տվյալ պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են Բանկում առկա չբաշխված գուտ շահույթի գումարը:

Միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է խորհուրդը: Միջանկյալ շահութաբաժնի չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված և/կամ հաշվարկված շահութաբաժնի 50 տոկոսը:

Տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ խորհրդի առաջարկությամբ: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

Բանկի շահութաբաժինների վճարման կարգը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա՝

- իրավաչափության պահպանում՝ Բանկի կողմից գործընթացի իրականացում համաձայն ՀՀ

Armenia OJSC, located at 5b Mher Mkrtychyan St., Yerevan 0010, RA.

The Bank will apply to the Stock Exchange for the listing of its shares. The application to list the shares may also be denied by the Stock Exchange. The shares of the Bank are included in the primary List A of “NASDAQ OMX Armenia. After the Bank’s shares are listed and admitted for trading, they may be purchased and sold on the relevant platform of NASDAQ OMX Armenia OJSC.

In the case that the Bank’s shares are listed and admitted for trading, they may not be traded outside the regulated market, except in the following cases permitted by the CBA:

- Private transactions, i.e. transactions with parties known beforehand; according to the decision of CBA’s Board N331-H from the 27th of November 2012, private transactions are the following:
 - ✓ Operations concluded by the CBA
 - ✓ Buy back or purchase operations of the securities issued by the issuer itself
 - ✓ Transactions on the share securities within the framework of proposal on securities submission
 - ✓ Transactions executed by underwriters within the framework of the distribution of securities Admission to trade on other regulated markets.

Market Maker

The Bank already has a market making contract with Armenbrok OJSC (address: Tigran Mets 32/1, 0018, Yerevan, Armenia). The main terms of Market Making rules will also be spread to the new issue of shares.

**The description of shareholders rights
Right for dividends payment**

Each share entitles its owner to a dividend in proportion to the number of shares held. Matters relating to the payment of dividends on shares are regulated by RA legislation, the Bank’s Charter and the Bank’s “Dividend Payment Procedure”.

The Bank can declare and pay quarterly, semiannual and annual dividends, if other is not determined by the Law and Charter. Common shares dividends are paid in AMD, and by other property, including shares of the Bank, determined by the Charter of the Bank.

The Bank may not declare and pay dividends if the Bank’s net asset value is less than its statutory capital or will become less as a result of the payment of dividends. The Bank may not pay dividends if the Bank’s statutory capital has not been fully paid up. The amount and terms of payment of interim dividends however is determined by a Board decision. The size of an interim dividend may not exceed 50 per cent of dividends accumulated or distributed in the previous financial year.

The amount and terms of payment of annual dividends is determined by the Shareholders’ General Meeting, by the Bank’s Board proposal. Annual dividends may not be less than any interim dividends already paid.

The following principles underlie the Bank’s “Dividend Payment Procedure”:

- legitimacy, i.e. implementation of the process with adherence to RA legislation, the Bank’s Charter and internal legal acts;
- segregation of authorities of the Bank’s governing bodies (Shareholders General Meeting and the Board) in making decisions on paying dividends;
- dividends will be paid from the Bank’s net profit.

The Bank's "Dividend Payment Procedure" is available at the Bank's Head Office and branches, as well as at the Bank’s web site at www.unibank.am.

օրենսդրության, ինչպես նաև Բանկի կանոնադրության և ներքին իրավական ակտերի,
– շահութաբաժինների վճարման գործընթացում իրավասությունների բաշխում՝ Բանկի կառավարման մարմինների (Բաժնետերերի Ընդհանուր Ժողով և Խորհուրդ) իրավասությունների սահմանում,
– շահութաբաժինների վճարում Բանկի գուտ շահույթից կատարվող մասհանումների հաշվին:
Բանկի «Շահութաբաժինների վճարման» կարգը հասանելի է Բանկի գլխամասային գրասենյակում և մասնաճյուղերում, ինչպես նաև Բանկի՝ www.unibank.am ինտերնետային կայքում:

Չայնի իրավունք

Բանկի սովորական բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերն իրավունք ունի անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով, ըստ իր բաժնետոմսերի քանակի ենթարկվելով օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ սահմանված սահմանափակումների:

Լուծարման դեպքում մնացած գույքից բաժին ստանալու իրավունքները

Բանկի սովորական բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերն իրավունք ունի Բանկի լուծարման դեպքում ստանալ Բանկի գույքի (միջոցների) իրեն հասանելիք մասը՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված հերթակալականությանը համապատասխան՝ Բանկի այլ պարտավորությունների մարումից հետո:

Հետգնման պահանջի իրավունքները

Չայնի իրավունք սովոր բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն Բանկից պահանջել բաժնետոմսերի հետգնման գնի որոշում և իրենց պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետգնումը, եթե՝

- որոշում է ընդունվել Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին և նշված բաժնետերերը քվեարկել են Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ նշված խոշոր գործարք կնքելու դեմ, կամ այդ հարցերով քվեարկությանը չեն մասնակցել.
- կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել են նշված բաժնետերերի իրավունքները, և նրանք դեմ են քվեարկել կամ քվեարկությանը չեն մասնակցել:

Բանկի կողմից բաժնետոմսերի հետգնումը կատարվում է դրանց շուկայական արժեքով, որը որոշվում է առանց բաժնետոմսի գնահատման և հետգնման պահանջի իրավունք սովոր Բանկի գործողությունների հետևանքով առաջացող փոփոխությունները հաշվի առնելով:

Բանկի կողմից բաժնետոմսերի հետգնման համար անհրաժեշտ է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությունը: ՀՀ կենտրոնական բանկը կարող է մերժել այդ համաձայնություն տալը, եթե՝

- ա) բաժնետոմսերի հետգնման դեպքում Բանկն ի վիճակի չի լինի լրիվ բավարարելու իր պարտատերերի պահանջները.
- բ) կլիայնախի հիմնական տնտեսական նորմատիվները.
- գ) մասնակցության հետգնումը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի ապակայունացմանը:

Բանկի բաժնետոմսերի հետգնումը կարգավորվում է Բանկի կանոնադրությամբ և «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով:

Փոխարկման իրավունքներ

Բանկի կողմից թողարկվող սովորական բաժնետոմսերի փոխարկման իրավունք չի նախատեսվում:

Այլ իրավունքները

Բանկի սովորական բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերն իրավունք ունի նաև՝
– անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել Բանկի կառավարմանը,
– ծանոթանալ Բանկի հաշվեկշիռին, ֆինանսական և հարկային հաշվետվություններին,
– Բանկի կանոնադրությամբ և օրենքով սահմանված կարգով օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերը,
– իրականացնել օրենսդրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

Right to vote:

The Bank's common shareholders are entitled to participate in the Shareholders General Meeting personally or through an authorized representative, with the right to vote on all matters falling within the competence of the meeting in proportion to the number of shares held by each shareholder, subject to the restrictions prescribed by legislation and the Bank's Charter.

Right to receive a share of the Bank's assets in the case of the Bank's liquidation:

Upon the Bank's liquidation common shareholders have a right to receive a share in proportion to their shareholding of the Bank's assets as defined by the RA Law "Banks and Banking" after repayment of other liabilities of the Bank.

Right to claim a buyback of shares:

Common shareholders may request the Bank to purchase their shares at a market price determined by the Board of the Bank on part of shares or all the shares held by them if:

- a decision was passed on the Bank's reorganization, suspension of shareholder pre-emptive rights or the conclusion of a large transaction, and the shareholders voted against such decisions or did not participate in voting on such decisions, or
- the Charter was amended or supplemented, or a new edition of the Charter was approved, which limited the rights of the common shareholders who voted against such decisions or did not participate in voting on such decisions.

The Bank shall carry out the buyback of shares at the market price, which will be determined without taking into account the price of the share and the changes resulting from the Bank's actions, giving the right for the shares buyback.

The approval of Central Bank of Armenia is required for the buyback of the Bank's shares. The Central Bank of Armenia may decline its approval if:

- In case of buyback Bank will not be able to satisfy the requests of its borrowers
- The main economic normatives will be breached
- The buyback will bring instability to the banking system of RA

Procedure for the buyback of the Bank's shares is defined by the Bank Charter and the RA Law "On Banks and Banking".

Right of conversion of shares

No right of conversion of common shares issued by the Bank is envisaged.

Other rights of the shareholders

The Bank's common shareholders are also entitled to:

- personally, or through an authorized representative, participate in shareholder decisions on the Bank's management;
- have access to the Bank's balance sheet, financial and tax reports;
- in the manner stipulated by the Bank's Charter and the law to alienate or otherwise transfer the shares owned to third parties;
- exercise other powers vested in him by legislation.

Բաժնետոմսերից ստացվող եկամուտների հարկման կարգի նկարագրությունը

Բաժնետոմսերում ներդրում կատարող անձը եկամուտ կարող է ստանալ հետևյալ դեպքերում՝

- բաժնետոմսերից ստացվող շահութաբաժաններից,
- բաժնետոմսերի վաճառքի և գնման գների դրական տարբերությունից (իրացված կապիտալի հավելված):

Բաժնետոմսերից ստացվող եկամտի հարկման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված են առանձնահատկություններ շահութահարկի և եկամտային հարկի գծով:

Ռեզիդենտ իրավաբանական անձանց համար բաժնետոմսերից ստացվող եկամուտների հարկումը կատարվում է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի Հոդված 5-ի, Հոդված 7-ի և Հոդված 26-ի համաձայն: Մասնավորապես.

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի ստացած շահաբաժինների գումարի չափով, այսինքն՝ շահաբաժինները (բաժնետոմսերից ստացվող եկամուտները) չեն հարկվում շահութահարկով:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց հարկման դեպքում Բանկը հանդես է գալիս որպես հարկային գործակալ, որի վրա ՀՀ օրենքներով դրված է ոչ ռեզիդենտ կազմակերպությունների եկամուտներից շահութահարկը հաշվարկելու, պահելու (գանձելու) և Հայաստանի Հանրապետության բյուջե վճարելու պարտավորությունը: Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների կողմից ստացված շահութաբաժինները, ինչպես նաև իրացված բաժնետոմսերի կապիտալի հավելվածը հարկվում են **10%** դրույքաչափով:

ՀՀ-ում եկամտային հարկ են վճարում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է: Համաձայն «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի՝ 7-րդ հոդվածի՝ հարկ վճարողի հարկվող օբյեկտի որոշման ժամանակ համախառն եկամուտը նվազեցվում է ստացված շահաբաժինների չափով, ինչպես նաև բաժնետոմսերի օտարումից, այլ արժեթղթերի հետ փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացված եկամտի չափով: Այսինքն՝ ֆիզիկական անձանց համար բաժնետոմսերից ստացված շահութաբաժինները և իրացված կապիտալի հավելվածը չեն հարկվում:

2017 թվականի հունվարի 1-ից ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից ստացվող շահութաբաժինները ենթակա են հարկման՝ **10%** դրույքաչափով: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի՝ **159**-րդ հոդվածի 4-րդ մասի՝ շահաբաժինների տեսքով ստացվող եկամուտները դրանց ստացման հարկային տարվա ընթացքում շահաբաժին վճարող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ նույն կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում օրենսդրությամբ սահմանված կարգով ներդնելու դեպքում ներդրված գումարը, բայց ոչ ավելի, քան շահաբաժիններից պետական բյուջե վճարված հարկի գումարները, պետական բյուջեից փոխհատուցվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

The description of the taxation on dividends received from shares

An investor in shares may derive income in the following cases:

- from dividends received from the shares,
- from the positive difference between the selling and buying prices of shares (capital gain).

According to the Armenian legislation there are determined peculiarities on profit tax and income tax. For resident legal entities taxation on dividends received from the shares is realized according to the article 5, 7 and 26 of RA Law "On Profit Tax". Pursuant to Article 26 of the RA Law "On Profit Tax", when determining taxable profit, gross income shall be reduced by the amount of dividends received by the taxpayer, with the exception of nonresident's taxable profit, i.e dividends received from shares are not taxable.

In case of non-resident organizations the Bank acts as a tax agent who, according to the RA laws, is responsible for the calculation, deduction (charging) and payment to the RA budget of the profit tax from income received by non-resident organizations. Dividends received by nonresident organizations are taxed at a rate of 10%. For nonresident organizations capital gains on shares are also taxed at 10%.

Income tax payers in Armenia are resident and non-resident physical persons. Taxable income is the positive difference between the taxpayer's gross income and the deductions made in compliance with the RA Law "On Income Tax". Pursuant to Article 7 of the RA Law "On Income Tax", when assessing the tax base of the taxpayer, the gross income shall be deducted by the amount of dividends received, as well as by the income received from the disposal of shares or their exchange with other securities, or from other similar transactions. Thus, for physical persons, dividends received from shares and the capital gains are not taxable.

Starting from January 1, 2017 dividends received from shares for non-resident physical persons will be taxed at 10%. According to Part 4 of Article 159 of the Tax Code of the RA, when investing the income received as dividend in the authorized capital of the same organization - resident of the Republic of Armenia, in accordance with the legislation, which pays dividends during the fiscal year of receiving dividends, the amount of investment, but not more than the amount of the dividend tax paid to the state budget, shall be compensated in accordance with the procedure established by the RA Government.